

AGREEMENT FOR ARCHITECTURAL DESIGN SERVICES

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

PROJECT: ACADEMIC CITY

ԾՐԱԳԻՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ

Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

as the Client

որպես Պատվիրատու

gmp International GmbH Architects and Engineers

ջիէմփի ինթերնեյշնլ Ջիէմփիէյջ արքիթեքթս ընդ էնջինիերս

as the Consultant

որպես Խորհրդատու

Academic City Fund

Ակադեմիական քաղաք հիմնադրամ

as the Beneficiary

որպես Շահառու

THIS AGREEMENT FOR ARCHITECTURAL DESIGN SERVICES (the “Agreement”) is dated January 27, 2025, and made by and among:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՈՒՑՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (այսուհետ՝ «Պայմանագիր») կնքվել է 2025թ.-ի հունվարի 27-ին հետևյալ կողմերի միջև.

(1) HIGHER EDUCATION AND SCIENCE COMMITTEE OF THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORTS OF THE REPUBLIC OF ARMENIA (the “Client”) with address at 22 Orbeli Brothers Street, Yerevan 0028, Republic of Armenia, represented by its Chairman Sargis Hayotsyan (Identification Card No. 011564788), acting on the basis of the Client’s charter;

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ (այսուհետ՝ «Պատվիրատու»)՝ իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0028, Օրբելի եղբայրների փող. 22՝ ի դեմս նախագահ Սարգիս Հայոցյանի (նույնականացման քարտ համար՝ 011564788), որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա,

(2) GMP INTERNATIONAL GMBH ARCHITECTS AND ENGINEERS (the “Consultant”), organized and existing under the laws of the Federal Republic of Germany with company number HRB 79167 and with address at Hardenberg Street 4-5, 10623 Berlin, Germany, represented by its Managing Director Stephan Schütz (Passport No. C3JTV6HVY), acting on the basis of the Consultant’s charter;

ՋԻԷՄՓԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՋԻԷՄԲԻԷՅՉ ԱՐԹԻԹԵԹՍ ԸՆԴ ԷՆՋԻՆԵՐՍ (այսուհետ՝ «Խորհրդատու»)՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքների համաձայն հիմնադրված և գործող ընկերություն, ընկերության գրանցման համար՝ HRB 79167, հասցե՝ Գերմանիա, Բերլին 10623, Հարդենբերգ փող. 4-5՝ ի դեմս գործադիր տնօրեն Ստեֆան Շյուցի (անձնագիր համար՝ C3JTV6HVY), որը գործում է Խորհրդատուի կանոնադրության հիման վրա,

(3) ACADEMIC CITY FUND (the “Beneficiary”) with registration number 222.160.1315877 and with address at Gitavan-2, Ashtarak 0204, Republic of Armenia, represented by its Director Armen Simonyan (Identification Card No. 010663086), acting on the basis of the Beneficiary’s charter.

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՀԻՄՆԱԴՐԱՄ (այսուհետ՝ «Շահառու»)՝ գրանցման համար՝ 222.160.1315877, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Աշտարակ 0204, Գիտավան-2՝ ի դեմս տնօրեն Արմեն Սիմոնյանի (նույնականացման քարտ համար՝ 010663086), որը գործում է Շահառուի կանոնադրության հիման վրա:

The Client, the Consultant and the Beneficiary are sometimes referred to herein individually as a “Party” and together as “Parties.”

Պատվիրատուն, Խորհրդատուն և Շահառուն այս Պայմանագրում երբեմն առանձին կոչվում են «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր»:

WHEREAS

ՀԱԾՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՈՐ

(i) The Government of the Republic of Armenia (the “Government”) has undertaken the design, construction and development of the Academic City Project (the “Project”).

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ «Կառավարություն») նախաձեռնել է Ակադեմիական քաղաքի ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») նախագծումը, կառուցումը և զարգացումը:

- (ii) As a result of procurement procedure, the Government has approved, by Government Resolution No. 71-A, dated January 23, 2025, the sole source purchase from the Consultant of architectural design services for the Project.
- (iii) The Consultant is a design services provider with technical capabilities to provide the Services, as defined below, to the Client and the Beneficiary.

Գնումների ընթացակարգի արդյունքում Կառավարությունը, 2025թ.-ի հունվարի 23-ի թիվ 71-Ա որոշմամբ, հաստատել է Ծրագրի իրականացման համար Խորհրդատուից ճարտարապետական նախագծման ծառայությունների ձեռք բերումը՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

Խորհրդատուն նախագծային ծառայություններ մատուցող կազմակերպություն է, որն ունի Պատվիրատուին և Շահառուին ստորև սահմանված Ծառայությունները մատուցելու տեխնիկական հնարավորություններ:

NOW THEREFORE THE PARTIES AGREE ON THE FOLLOWING:

ՈՒՍԻ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՉԱՅՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

1 Subject of the Agreement

Pursuant to this Agreement, the Consultant agrees to provide to the Client professional services in connection with preparing a schematic master plan for the Project based on the concept masterplan of the Project submitted by the Consultant in July 2024 and any ancillary services, as defined in Article 2 below, and the Client agrees to pay for such services.

Պայմանագրի առարկան

Սույն Պայմանագրի համաձայն՝ Խորհրդատուն համաձայնում է Պատվիրատուին մատուցել Խորհրդատուի կողմից 2024թ.-ի հուլիսին Ծրագրի համար ներկայացված՝ գլխավոր հատակագծի հայեցակարգի հիման վրա Ծրագրի համար սխեմատիկ գլխավոր հատակագծի մշակման հետ կապված մասնագիտական ծառայություններ և ցանկացած օժանդակ ծառայություն, ինչպես սահմանված է ստորև՝ 2-րդ հոդվածում, իսկ Պատվիրատուն համաձայնում է վճարել այդ ծառայությունների համար:

2 Specification of Services

Ծառայությունների նկարագիր

2.1 Scope of Services

Ծառայությունների շրջանակը

The Consultant shall perform such services relating to the Project as set out in Appendix No. 1 (*Scope of Services*) of this Agreement (the “**Services**”), with the optional services included in the Services to be provided only upon the written instruction of the Client.

Խորհրդատուն պետք է մատուցի Ծրագրին առնչվող այնպիսի ծառայություններ, որոնք սահմանված են սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) (այսուհետ՝ «**Ծառայություններ**»): Ծառայությունների շրջանակում ներառված լրացուցիչ (կամընտիր) ծառայությունները պետք է մատուցվեն միայն Պատվիրատուի գրավոր հանձնարարության հիման վրա:

2.2 Phases of Provision of Services

The Services shall be provided in two phases:
Phase 0: project preparation and information management; and

Phase 1: schematic design of masterplan, with Phase 1 commencing upon the written instruction of the Client.

2.3 Area of Provision of Services

The Project shall be implemented within and the Services shall be provided for the territory of the 17th District of Yerevan, Republic of Armenia, designated for the Project, and Hayfilm area, as outlined in Appendix No. 2 (*Project Area*) of this Agreement.

2.4 Beneficiary of Services

The Services shall be provided for the implementation of the Project and for the benefit of the Beneficiary.

2.5 Consultant’s Responsibilities

The Consultant shall perform the Services and carry out its obligations hereunder with all due diligence, efficiency, and economy, in accordance with generally accepted professional requirements and practices and shall observe sound management practices and employ qualified personnel. The Consultant shall always act, in respect of any matter relating to this Agreement or to the Services, as faithful adviser to the Client, and shall at all times support and safeguard the Client’s and the Beneficiary’s legitimate interests.

2.6 Additional Services

Any services to which this Agreement does not extend shall be contracted in writing with

Ծառայությունների մատուցման փուլերը

Ծառայությունները մատուցվում են երկու փուլով՝

Փուլ 0. նախագծի նախապատրաստում և տեղեկությունների կառավարում, և

Փուլ 1. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. 1-ին փուլը մեկնարկում է Պատվիրատուի գրավոր հանձնարարության հիման վրա:

Ծառայությունների մատուցման տարածքը

Ծրագիրը պետք է իրականացվի և Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի համար նախատեսված՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 17-րդ թաղամաս հասցեով գտնվող տարածքում և Հայֆիլմի տարածքում, ինչպես նկարագրված է սույն Պայմանագրի Հավելված 2-ում (*Նախագծի տարածք*):

Ծառայությունների շահառու

Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի իրականացման շրջանակներում և ի շահ Շահառուի:

Խորհրդատուի պարտականությունները

Խորհրդատուն պետք է մատուցի Ծառայությունները և կատարի Պայմանագրով նախատեսված՝ իր պարտավորությունները բարեխղճորեն, արդյունավետորեն և խնայողաբար՝ ընդհանուր կերպով ընդունված մասնագիտական պահանջներին և պրակտիկային համապատասխան, և պետք է որդեգրի կառավարման որակյալ գործելակերպ և աշխատանքի ընդունի որակավորված անձնակազմի: Խորհրդատուն պետք է սույն Պայմանագրին կամ Ծառայություններին վերաբերող ցանկացած հարցի առնչությամբ միշտ հանդես գա՝ որպես Պատվիրատուի հավատարիմ խորհրդատու և միշտ աջակցի Պատվիրատուի և Շահառուի օրինական շահերի իրականացմանը և պաշտպանի դրանք:

Լրացուցիչ ծառայություններ

Սույն Պայմանագրում չներառված ցանկացած ծառայության վերաբերյալ պետք է գրավոր

the Client or the Beneficiary with the cost for such additional services being agreed in writing with the Client or the Beneficiary prior to the provision of the services.

համաձայնությունն ձեռք բերվի Պատվիրատուի կամ Շահառուի հետ՝ պայմանով, որ այդ լրացուցիչ ծառայությունների արժեքը պետք է գրավոր համաձայնեցվի Պատվիրատուի կամ Շահառուի հետ՝ նախքան ծառայությունների մատուցումը:

3 Compensation and Payment for the Services

3.1 As compensation in full to the Consultant for the satisfactory performance of all Services, the Client agrees to pay the Consultant compensation for the Services as follows (the “Services Fee”):

Ծառայությունների համար փոխհատուցում և վճարում

Որպես ամբողջական փոխհատուցում բոլոր Ծառայությունների՝ բավարար մակարդակով կատարման համար՝ Պատվիրատուն համաձայնում է վճարել Խորհրդատուին փոխհատուցում Ծառայությունների համար՝ հետևյալ կերպ (այսուհետ՝ «Ծառայությունների Վճար»):

Phase 0: project preparation and information management – **Euro 140,000**

Փուլ 0. նախագծի նախապատրաստում և տեղեկությունների կառավարում՝ **140,000 եվրո**

Phase 1: schematic design of masterplan

Փուլ 1. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում

Phase 1 - Component 1: schematic design of masterplan: integration and revision – **Euro 680,000**

Փուլ 1՝ Բաղադրիչ 1. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. ինտեգրում և փոփոխում՝ **680,000 եվրո**

Phase 1 - Component 2: schematic design of masterplan: design guidelines – **Euro 300,000**

Փուլ 1՝ Բաղադրիչ 2. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. նախագծային ուղեցույց՝ **300,000 եվրո**

Phase 1 - Component 1: Optional Service: vertical design – **Euro 15,000**

Փուլ 1՝ Բաղադրիչ 1. Լրացուցիչ (կամընտիր) ծառայություն՝ ուղղահայաց պլանավորում՝ **15,000 եվրո**

3.2 The Services Fee, in accordance with the scope and deliverables outlined in Appendix No. 1 (*Scope of Services*) of this Agreement, shall include out-of-pocket expenses of the Consultant, cost of travel, workshop attendance, and any ancillary expenses of the Consultant incurred in connection with the provision of the Services.

Ծառայությունների Վճարը, համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) նշված ծավալների և ներկայացվելիք նյութերի, պետք է ներառի Խորհրդատուի ընթացիկ ծախսերը, ճանապարհորդության ծախսերը, աշխատաժողովներին մասնակցությունը և Խորհրդատուի ցանկացած այլ ծախս, որը կատարվել է Ծառայությունների մատուցման կապակցությամբ:

Should the Client request further business trips by the Consultant, beyond the business trips outlined in Appendix No. 1 (*Scope of Services*) of this Agreement, each additional trip (max. two days on site) is subject to remuneration by the Client at the amount of

Եթե Պատվիրատուն Խորհրդատուից պահանջի սույն Պայմանագրի Հավելված 1-ով (*Ծառայությունների շրջանակը*) նախատեսված գործուղումներից բացի լրացուցիչ գործուղումներ, ապա յուրաքանչյուր լրացուցիչ գործուղում (առավելագույնը երկու օր տևողությամբ) ենթակա է

Euro 6,000 for the Executive Partner (i.e. Stephan Schütz), Euro 4,500 for the Partner-in-Charge (i.e. Tobias Keyl), and Euro 3,000 for regular staff.

Պատվիրատուի կողմից վարձատրության՝ 6000 եվրո գործադիր գործընկերոջ համար (այսինքն՝ Ստեֆան Շյուց), 4500 եվրո՝ պատասխանատու գործընկերոջ համար (այսինքն՝ Թոբիաս Քեյլ) և 3000 եվրո՝ մյուս անձնակազմի համար:

3.3 Any addition to the scope, deliverables, or delivery period outlined in Appendix No. 1 (*Scope of Services*) of this Agreement, shall be undertaken by the Consultant for a reasonable fee to be mutually agreed upon by the Client and the Consultant.

Սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Ծառայությունների շրջանակը*) նշված ծավալի, ներկայացվելիք նյութերի կամ ներկայացման ժամկետի հետ կապված ցանկացած ընդլայնում Խորհրդատուի կողմից պետք է իրականացվի խելամիտ վճարի դիմաց, որը փոխադարձաբար կհամաձայնեցվի Պատվիրատուի և Խորհրդատուի կողմից:

3.4 The Services Fee shall be paid in Euro.

Ծառայությունների Վճարը պետք է վճարվի եվրոյով:

3.5 The Consultant shall be responsible for and shall pay (or cause to be paid) all taxes imposed upon its net income and payroll taxes.

Խորհրդատուն պետք է կրի և վճարի (կամ նպաստի, որ վճարվեն) բոլոր հարկերը, որոնք գանձվում են իր գուտ շահույթից և աշխատավարձերից:

3.6 The Client and the Consultant agree that the Consultant shall receive payments 30 calendar days after issuing the respective invoices for Advance Payments, Interim Payments and Final Payments for each of Phase 0 and Phase 1, as defined below. For all payments, apart from the Advance Payments, the Client must confirm in writing, before the Consultant will be able to issue the respective invoice, that neither the Client nor the Beneficiary has any objections as to the quality or adequacy of such portion of the Services for which the Consultant is to submit an invoice.

Պատվիրատուն և Խորհրդատուն համաձայնում են, որ Խորհրդատուն վճարումներն ստանալու է 0 և 1-ին փուլերով նախատեսված՝ Կանխավճարի, Միջանկյալ Վճարման և Վերջնական Վճարման (ինչպես սահմանված է ստորև) համար համապատասխան հաշիվ-ապրանքագրերը տրամադրելուց 30 օրացուցային օր հետո: Բոլոր վճարումների դեպքում, բացի Կանխավճարներից, Պատվիրատուն պետք է գրավոր հաստատի, որ ոչ Պատվիրատուն, ոչ էլ Շահառուն Ծառայությունների այն մասի որակի կամ համապատասխանության առնչությամբ որևէ առարկություն չունեն, որի համար Խորհրդատուն նախատեսում է ներկայացնել հաշիվ-ապրանքագիր, որպեսզի Խորհրդատուն կարողանա համապատասխան հաշիվ-ապրանքագիրը տրամադրել:

3.7 If the payment is not received on the account of the Consultant within 30 calendar days after issuing an invoice, the Services shall be suspended until payment is received.

Եթե հաշիվ-ապրանքագիրը տրամադրելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում Խորհրդատուի հաշվին վճարումը չի ստացվում, ապա Ծառայությունները կկասեցվեն մինչև վճարումը ստանալը:

3.8 Payment schedule of the Services Fee shall be as follows:

Ծառայությունների Վճարի վճարման ժամանակացույցը հետևյալն է.

Phase 0

Advance Payment – 20% of Phase 0 fee after signing the Agreement

Interim Payment – 40% of Phase 0 fee after project kick off workshop

Final Payment – 40% of Phase 0 fee after submission of Phase 0 deliverables

Phase 1 - Component 1

Advance Payment – 10% of Component 1 fee after the Client's written instruction to proceed with Phase 1 – Component 1

Interim Payment – 45% of Component 1 fee after interim design workshop

Final Payment – 45% of Component 1 fee after submission of Component 1 deliverables

Phase 1 - Component 2

Advance Payment – 50% of Component 2 fee after submission of Component 1 deliverables

Final Payment – 50% of Component 2 fee after submission of Component 2 deliverables

- 3.9 In case of delay of more than six months between the completion of Phase 0 and the commencement of Phase 1, the Client agrees to pay to the Consultant a remobilization fee of two percent of Phase 1 fee (with the exclusion of the fee for Phase 1 - Component 1: Optional Service) prior to re-commencing the Consultant's work.

5 Payments from the Client

All payments to be made under this Agreement shall be made in cleared funds, without any deduction of cash discount or set-off and free and clear of and without deduction for or on account of any taxes, levies, imports, duties, charges, fees and withholdings of any nature now or hereafter

Փուլ 0

Կանխավճար՝ 0 փուլի վճարի 20%-ը՝ Պայմանագիրը ստորագրելուց հետո

Միջանկյալ Վճարում՝ 0 փուլի վճարի 40%-ը՝ նախագծի առաջին աշխատաժողովից հետո

Վերջնական Վճարում՝ 0 փուլի վճարի 40%-ը՝ 0 փուլում ներկայացվելիք նյութերը հանձնելուց հետո

Փուլ 1՝ Բաղադրիչ 1

Կանխավճար՝ 1-ին բաղադրիչի վճարի 10%-ը՝ 1-ին փուլի 1-ին բաղադրիչը սկսելու մասին Պատվիրատուի գրավոր հանձնարարությունը ստանալուց հետո

Միջանկյալ Վճարում՝ 1-ին բաղադրիչի վճարի 45%-ը՝ միջանկյալ նախագծային աշխատաժողովից հետո

Վերջնական Վճարում՝ 1-ին բաղադրիչի վճարի 45%-ը՝ 1-ին բաղադրիչի ներկայացվելիք նյութերը հանձնելուց հետո

Փուլ 1՝ Բաղադրիչ 2

Կանխավճար՝ 1-ին բաղադրիչի վճարի 50%-ը՝ 2-րդ բաղադրիչի ներկայացվելիք նյութերը հանձնելուց հետո

Վերջնական Վճարում՝ 2-րդ բաղադրիչի վճարի 50%-ը՝ 2-րդ բաղադրիչի ներկայացվելիք նյութերը հանձնելուց հետո

Պատվիրատուն համաձայնում է մինչև Խորհրդատուի աշխատանքի վերսկսումը Խորհրդատուին վճարել 1-ին փուլի վճարի (բացառությամբ 1-ին փուլի 1-ին բաղադրիչի լրացուցիչ (կամրնտիր) ծառայության վճարի) երկու տոկոսի չափով վերսկսման վճար 0 փուլի ավարտի և 1-ին փուլի մեկնարկի միջև վեց ամսից ավելի տևողությամբ ուշացման դեպքում:

Պատվիրատուի կողմից կատարվող վճարումները

Սույն Պայմանագրի համաձայն կատարվող բոլոր վճարումները պետք է կատարվեն անմիջապես հասանելի միջոցներով, առանց վաղաժամ վճարման կամ հաշվանցման հետ կապված որևէ նվազեցման և առանց որևէ հարկի, գանձման, ներմուծման տուրքի, վճարի և ցանկացած այլ պահման առնչությամբ նվազեցման, որոնք այս պահին կամ հետագայում

imposed by any governmental, fiscal or other authority save as required by law. If a Party to this Agreement is compelled to make any such deduction, it will pay to the receiving Party such additional amounts as are necessary to ensure receipt by the receiving Party of the full amount which that Party would have received but for the deduction.

կիրառվում են որևէ պետական, հարկաբյուջետային կամ այլ մարմնի կողմից՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Եթե սույն Պայմանագրի Կողմը պարտավոր է կատարել որևէ այդպիսի նվազեցում, ապա այն ստացող Կողմին պարտավոր է վճարել այնպիսի լրացուցիչ գումար, որն անհրաժեշտ է՝ ապահովելու համար, որ ստացող Կողմն ամբողջությամբ ստանա այն գումարը, որը կստանար առանց նվազեցման:

6 Performance Bank Guarantee

6.1 To secure the performance by the Consultant of its obligations under this Agreement and as a condition precedent to the Consultant's entitlement to receive any payment from the Client under this Agreement, the Consultant shall, within ten business days upon the execution of this Agreement, deliver to the Client an on demand performance bank guarantee for an amount equal to ten percent of the Services Fee to be effective from the date of issuance until June 30, 2026 (the "Performance Bank Guarantee").

6.2 The Performance Bank Guarantee shall be returned to the Consultant as soon as reasonably practicable after it expires in accordance with its terms and all liabilities under the Performance Bank Guarantee have been fully discharged.

7 Adjournment

The Client may, by giving a notice in writing to the Consultant, adjourn the whole or any part of the Project at any time. In the event of the whole or a part of the Project being adjourned, the Consultant shall be compensated for all work completed up to the date of adjournment plus any reasonable and

Կատարման բանկային երաշխիք

Խորհրդատուի կողմից սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումն ապահովելու համար և որպես Խորհրդատուի կողմից, սույն Պայմանագրի համաձայն, Պատվիրատուից որևէ վճարում ստանալու նախապայման՝ Խորհրդատուն պարտավոր է սույն Պայմանագրի կնքումից հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել ցպահանջ կատարման բանկային երաշխիք՝ Ծառայությունների Վճարի տասը տոկոսին համարժեք գումարի չափով, որն ուժի մեջ կմտնի թողարկման օրվանից և ուժի մեջ կլինի մինչև 2026թ.-ի հունվարի 30-ը (այսուհետ՝ «Կատարման Բանկային Երաշխիք»):

Կատարման Բանկային Երաշխիքը պետք է վերադարձվի Խորհրդատուին Կատարման Բանկային Երաշխիքի պայմանների համաձայն, դրա գործողության ժամկետը լրանալուց և Կատարման Բանկային Երաշխիքով նախատեսված բոլոր պարտավորություններն ամբողջությամբ կատարվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:

Հետաձգում

Պատվիրատուն կարող է, Խորհրդատուին գրավոր ծանուցում ներկայացնելով, ցանկացած պահի հետաձգել Ծրագրի կամ դրա որևէ մասի իրականացումը: Ծրագրի ամբողջությամբ կամ մասնակիորեն հետաձգման դեպքում, հետաձգումից 30 օրացուցային օրվա ընթացքում, Խորհրդատուին փոխհատուցում կտրվի մինչև հետաձգման օրը

justifiable costs for demobilization and/or adjournment within 30 calendar days of such adjournment. If any such adjournment is for more than six months, the Consultant shall be entitled to terminate this Agreement.

կատարված բոլոր աշխատանքների համար՝ գումարած դադարեցման և (կամ) հետաձգման հետ կապված ցանկացած ողջամիտ և հիմնավորված ծախս: Եթե որևէ այդպիսի հետաձգման տևողություն գերազանցի վեց ամիսը, ապա Խորհրդատուն իրավունք կունենա դադարեցնելու սույն Պայմանագիրը:

8 The Client's Undertakings

- 8.1 The Client or the Beneficiary shall provide information regarding the Project to the Consultant, including requirements to the masterplan, design objectives, constraints and criteria for design, including space requirements and relationships, flexibility, special equipment and system and site requirements.
- 8.2 The Client or the Beneficiary shall designate, when necessary, a representative authorized to act on the Client's and the Beneficiary's behalf with respect to the Project. Such authorized representative shall examine the documents submitted by the Consultant and shall render decisions pertaining thereto promptly, to avoid unreasonable delay in the progress of the Services.
- 8.3 The Client and the Beneficiary shall furnish required information and shall render approvals and decisions as expeditiously as necessary for the orderly progress of the Services.

Պատվիրատուի պարտավորությունները

Պատվիրատուն կամ Շահառուն Խորհրդատուին պետք է տրամադրի Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառյալ գլխավոր հատակագծին, նախագծման նպատակներին, նախագծման սահմանափակումներին և չափանիշներին վերաբերող պահանջները, այդ թվում՝ տարածքին վերաբերող պահանջներն ու հարաբերություններին, ճկունությանը, հատուկ սարքավորումներին ու համակարգին և տեղանքին ներկայացվող պահանջները:

Պատվիրատուն կամ Շահառուն, անհրաժեշտության դեպքում, պետք է նշանակեն ներկայացուցիչ, որը Ծրագրի շրջանակներում լիազորված է գործելու Պատվիրատուի և Շահառուի անունից: Այդպիսի լիազորված ներկայացուցիչը պետք է ուսումնասիրի Խորհրդատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, և անհապաղ որոշումներ կայացնի դրանց վերաբերյալ՝ Ծառայությունների տրամադրման ընթացքի անհիմն ձգձգումներից խուսափելու համար:

Պատվիրատուն և Շահառուն պետք է տրամադրեն պահանջվող տեղեկատվությունը և տրամադրեն հաստատումներ և կայացնեն որոշումներ որքան հնարավոր է արագ, որպեսզի ապահովվի Ծառայությունների մատուցման կանոնավոր առաջընթացը:

9 Termination of the Agreement

- 9.1 The Client can terminate this Agreement at any time by giving a written termination notice to the Consultant.
- 9.2 The Consultant can terminate this Agreement if the invoices are not paid by the Client

Պայմանագրի դադարեցում

Պատվիրատուն ցանկացած պահի կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը՝ Խորհրդատուին ներկայացնելով գրավոր ծանուցում դադարեցման մասին:

Խորհրդատուն կարող է դադարեցնել սույն Պայմանագիրը, եթե Պատվիրատուի կողմից հաշիվ-

repeatedly on due date or in observance of Article 5 (*Payments from the Client*) by giving a written termination notice to the Client and the Beneficiary.

ապրանքագրերը բազմիցս չեն վճարվել սահմանված ժամկետներում կամ 5-րդ հոդվածի (*Պատվիրատուի կողմից կատարվող վճարումները*) պահանջների պահպանմամբ՝ Պատվիրատուին և Շահառուին ներկայացնելով դադարեցման մասին գրավոր ծանուցում:

9.3 In case of termination of the Agreement, the Consultant shall stop work immediately after receiving or sending the written termination notice, as the case may be, and report the status of work within one month. This report should describe the status and amount of work progressed until the date of termination also stating the compensation due.

Պայմանագրի դադարեցման դեպքում, Խորհրդատուն պետք է դադարեցնի աշխատանքները, ըստ կիրառելիության, դադարեցման մասին գրավոր ծանուցումն ստանալուց կամ ուղարկելուց անմիջապես հետո, և մեկ ամսվա ընթացքում զեկուցի աշխատանքների կարգավիճակի մասին: Այս հաշվետվությունը պետք է պարունակի մինչև դադարեցման ամսաթիվը կատարված աշխատանքների կարգավիճակի և ծավալի մասին տեղեկություն, ինչպես նաև նշում վճարման ենթակա փոխհատուցման գումարի մասին:

9.4 In case of termination of the Agreement, the Consultant shall be compensated for all services performed to the termination date, and the Client and the Beneficiary shall respect the Consultant's intellectual property.

Պայմանագրի դադարեցման դեպքում Խորհրդատուին պետք է փոխհատուցում տրվի մինչև Պայմանագրի դադարեցման ամսաթիվը մատուցված բոլոր ծառայությունների համար, և Պատվիրատուն ու Շահառուն պետք է պահպանեն Խորհրդատուի մտավոր սեփականության իրավունքը:

10 Property Rights/ Intellectual Properties, Copyrights

Սեփականության իրավունք/ Մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք

10.1 Except for standard specifications, details and designs used on other projects by the Consultant, all information, data (dwg and pdf), drawings, computer records, electronic data and documents developed or prepared by the Consultant in the performance of the Services shall forthwith become the absolute property of the Client or the Beneficiary, as the case may be, after the Consultant has received full compensation.

Բացառությամբ Խորհրդատուի կողմից այլ նախագծերում օգտագործվող ստանդարտ բնութագրերի, դետալների և դիզայնի, բոլոր տեղեկությունները, տվյալները (dwg և pdf), գծագրերը, համակարգչային գրառումները, էլեկտրոնային տվյալները և Խորհրդատուի կողմից Ծառայությունների կատարման ընթացքում մշակված կամ պատրաստված փաստաթղթերը Խորհրդատուի կողմից ամբողջական փոխհատուցում ստանալուց հետո պետք է անհապաղ համարվեն, ըստ կիրառելիության, Պատվիրատուի կամ Շահառուի բացարձակ սեփականությունը:

10.2 All information, data, drawings and documents of the Client or the Beneficiary, as the case may be, which the Consultant may possess or become aware of during the

Ըստ կիրառելիության, Պատվիրատուի կամ Շահառուի բոլոր տեղեկությունները, տվյալները, գծագրերը և փաստաթղթերը, որոնց Խորհրդատուն կարող է տիրապետել կամ որոնց մասին

provision of the Services shall remain, respectively, the Client's or the Beneficiary's absolute property and the Consultant shall only be entitled to use the same for the performance of the Services.

Խորհրդատուն կարող է տեղեկանալ Ծառայությունների մատուցման ընթացքում, շարունակում են լինել համապատասխանաբար Պատվիրատուի կամ Շահառուի բացարձակ սեփականությունը, և Խորհրդատուն իրավունք ունի օգտագործելու դրանք միայն Ծառայությունների մատուցման համար:

10.3 The Consultant retains all the rights accorded to him by copyright law.

Խորհրդատուն պահպանում է հեղինակային իրավունքի մասին օրենքով իրեն վերապահված բոլոր իրավունքները:

10.4 The Client and the Beneficiary may use the Consultant's artistic property without his consent but only as far as title to it has passed to the Client by reason of this Agreement, even if the artistic property is protected by copyright law.

Պատվիրատուն և Շահառուն կարող են օգտագործել Խորհրդատուի ստեղծագործական սեփականությունն առանց նրա համաձայնության այն դեպքում, երբ դրա սեփականության իրավունքը փոխանցվել է Պատվիրատուին սույն Պայմանագրի համաձայն՝ նույնիսկ այն դեպքում, երբ ստեղծագործական սեփականությունը պաշտպանված է հեղինակային իրավունքի մասին օրենքով:

10.5 The Consultant shall not use, disclose, or reproduce any intellectual property belonging to the Client without the Client's prior written consent. This provision shall survive the termination or expiration of this Agreement.

Խորհրդատուն չպետք է օգտագործի, բացահայտի կամ վերարտադրի Պատվիրատուին պատկանող մտավոր սեփականության որևէ օբյեկտ՝ առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության: Սույն դրույթը գործում է սույն Պայմանագրի դադարեցումից կամ գործողության ժամկետի ավարտից հետո:

10.6 The Consultant has the right – even after completion of the Services – to enter the project site at such time as are agreeable to the Client or the Beneficiary for the purpose of taking photographs or otherwise documenting the work.

Խորհրդատուն իրավունք ունի, նույնիսկ Ծառայությունների ավարտից հետո, Պատվիրատուի կամ Շահառուի հետ նախապես համաձայնեցված ժամանակ մուտք գործելու ծրագրի տարածք՝ լուսանկարելու կամ աշխատանքը այլ կերպ փաստաթղթավորելու նպատակով:

10.7 When publishing anything concerning the Project, the Client and the Beneficiary are obliged to mention the Consultant as the masterplanner and respect his concept and architectural vision of the Project.

Ծրագրի վերաբերյալ որևէ հրապարակում կատարելիս Պատվիրատուն և Շահառուն պարտավոր են նշել Խորհրդատուին՝ որպես գլխավոր հատակագիծը կազմող, և հարգել Ծրագրի հետ կապված նրա հայեցակարգը և ճարտարապետական տեսլականը:

10.8 Any architectural modification of the Project during subsequent design phases will have to be approved by the Consultant.

Ծրագրի հետ կապված ցանկացած ճարտարապետական փոփոխություն նախագծման հետագա փուլերում պետք է հաստատվի Խորհրդատուի կողմից:

11 Confidentiality

- 11.1 All information (including the terms of this Agreement) provided by either Party to the other Parties (with the exception of publicly available information) which is identified or marked by the disclosing Party as confidential or proprietary information or that reasonably should be known to be confidential, shall be treated in a confidential manner and shall not be disclosed to any third party without the prior written consent of the disclosing Party, which consent shall not be unreasonably withheld.
- 11.2 The confidentiality obligation under this Agreement shall survive the termination or expiration of this Agreement and shall remain in force for a period of five years upon such termination or expiration.

12 Liability

- 12.1 The Consultant shall be liable to the Client for the performance of the Services in accordance with the provisions of this Agreement and the relevant statutory provisions during the period of one year after the completion of the Services to the satisfaction of the Client and the Beneficiary. The Consultant's liability shall be limited to the amount of the agreed fee, except in cases of intent or gross negligence.
- 12.2 The Consultant shall not be liable for any delay in planning caused by delays attributable to or missing input from third-party specialists. In this case, the Consultant will be entitled to full compensation for such portion of the Services that has been completed.

Գաղտնիություն

Բոլոր այն տեղեկությունները (ներառյալ սույն Պայմանագրի դրույթները), որոնք տրամադրվել են Կողմերից մեկի կողմից մյուսներին (բացառությամբ հրապարակայնորեն հասանելի տեղեկատվության) և որոնք տրամադրող Կողմը սահմանել կամ նշել է որպես գաղտնի տեղեկատվություն կամ որոնք ողջամտորեն պետք է դիտարկվեն՝ որպես գաղտնի, պետք է համարվեն գաղտնի և չպետք է բացահայտվեն որևէ երրորդ կողմի առանց տրամադրող Կողմի նախնական գրավոր համաձայնության, որը չպետք է անհիմն կերպով չտրամադրվի:

Սույն Պայմանագրով նախատեսված՝ գաղտնիության պարտավորությունն ուժի մեջ է մնում և շարունակում է գործել՝ Պայմանագրի դադարեցումից կամ ժամկետի ավարտից հետո՝ հինգ տարի ժամկետով:

Պատասխանատվություն

Խորհրդատուն պատասխանատվություն է կրում Պատվիրատուի առջև, սույն Պայմանագրի դրույթների և համապատասխան օրենսդրական դրույթների համաձայն, Ծառայությունների կատարման համար Պատվիրատուի և Շահառուի պահանջներին համապատասխան՝ Ծառայությունների մատուցման ավարտից հետո մեկ տարվա ընթացքում: Խորհրդատուի պատասխանատվությունը սահմանափակվում է համաձայնեցված վճարի չափով՝ բացառությամբ դիտավորության կամ կոպիտ անփութության դեպքերի:

Խորհրդատուն պատասխանատվություն չի կրում պլանավորման գործում այնպիսի ուշացման համար, որն առաջացել է երրորդ կողմ մասնագետների կողմից ուշացումների կամ տեղեկատվություն չտրամադրելու հետևանքով: Այդ դեպքում Խորհրդատուն իրավունք կունենա ամբողջական փոխհատուցում ստանալու Ծառայությունների այն մասի համար, որն ավարտել է:

13 Term of the Agreement

The Agreement shall enter into force on the date of execution by all Parties and shall remain in full force and effect until all Services under this Agreement have been provided to the satisfaction of the Client and the Beneficiary, and all payments under this Agreement have been made by the Client, without prejudice to paragraphs 10.5 and 11.2 of the Agreement.

14 Force Majeure

Neither Party shall be liable for the failure to perform or delay in performance of its obligations under this Agreement, other than payment obligations, if such failure is caused by unforeseeable circumstances beyond the Party’s reasonable control, including, without limitation, war, riot, embargoes, acts of terrorism or sabotage, fire, flood, earthquake, accident, strikes, radiation, inability to secure transportation (“**Force Majeure**”). The Party affected by the Force Majeure shall (i) give written notice of suspension of its obligations as soon as reasonably practicable stating the date and extent of such suspension and the cause thereof, (ii) use its best efforts to remedy or remove such Force Majeure with the least practicable delay, and (iii) resume the performance of its obligations as soon as reasonably practicable after the remediation or removal of the cause.

15 Language

This Agreement is executed in parallel in English and Armenian versions. In case of any dispute as to the proper interpretation or in

Պայմանագրի ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի կողմից ստորագրման օրվանից և գործում է մինչև սույն Պայմանագրով նախատեսված բոլոր Ծառայությունների տրամադրումը՝ Պատվիրատուի և Շահառուի պահանջներին համապատասխան, և Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրով նախատեսված բոլոր վճարումների կատարումը՝ առանց սահմանափակելու Պայմանագրի 10.5 և 11.2 հոդվածները:

Ֆորս մաժոր

Որևէ Կողմ պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար, բացառությամբ վճարման պարտավորությունների, եթե այդպիսի պարտավորությունների չկատարումը պայմանավորված է Կողմի ողջամիտ վերահսկողությունից դուրս գտնվող անկանխատեսելի հանգամանքներով, այդ թվում, սակայն առանց սահմանափակման՝ պատերազմ, ապստամբություն, էմբարգոներ, սահբեկչություն կամ սաբոտաժ, հրդեհ, ջրհեղեղ, երկրաշարժ, դժբախտ պատահար, գործադուլ, ճառագայթում, փոխադրում ապահովելու անկարողություն (այսուհետ՝ «**Ֆորս Մաժոր**»): Ֆորս Մաժորից տուժած Կողմը պետք է (i) գրավոր ծանուցի իր պարտավորությունների կասեցման մասին՝ ուրբան ողջամտորեն հնարավոր է շուտ՝ նշելով այդ կասեցման ամսաթիվն ու ծավալը և դրա պատճառները, (ii) գործադրի իր լավագույն ջանքերը Ֆորս Մաժորը նվազագույն ուշացումով կարգավորելու կամ վերացնելու համար, և (iii) վերսկսի իր պարտավորությունների կատարումը կարգավորումից կամ պատճառների վերացումից հետո ուրբան հնարավոր է շուտ:

Պայմանագրի լեզու

Սույն Պայմանագիրը կնքվում է գուգահեռաբար անգլերեն և հայերեն տարբերակներով: Սույն Պայմանագրի ճշգրիտ մեկնաբանման

case of any inconsistency between the English and the Armenian versions of this Agreement, the English text shall prevail. Any sort of Project-related correspondence is agreed to be in English only.

կապակցությամբ առաջացող տարաձայնությունների դեպքում կամ անգլերեն ու հայերեն տարբերակների միջև հակասությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը: Ծրագրին վերաբերող ցանկացած հաղորդակցություն կատարվելու է միայն անգլերենով:

16 Applicable Law

This Agreement shall be governed by, and interpreted and construed in accordance with, the laws of the Republic of Armenia.

Կիրառելի օրենք

Սույն Պայմանագիրը պետք է կարգավորվի և մեկնաբանվի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան:

17 Dispute Resolution

17.1 If any issue, dispute, difference or claim arises out of or in connection with this Agreement, including any issue regarding its existence, validity, performance, or termination (“Dispute”), of which a Party has given written notice to the other Parties, senior management personnel from the Parties shall meet and diligently attempt to resolve the Dispute in good faith.

Վեճերի լուծում

Սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված որևէ խնդրի, վեճի, հակասության կամ պահանջի դեպքում, այդ թվում՝ Պայմանագրի գոյության, վավերության, կատարման կամ դադարեցման հետ կապված որևէ խնդրի (այսուհետ՝ «Վեճ») դեպքում, որի մասին Կողմը գրավոր ծանուցել է մյուս Կողմերին, Կողմերի ղեկավար մարմինները պետք է հանդիպեն և գործադրեն լավագույն ջանքերը՝ Վեճը բարեխղճորեն լուծելու համար:

17.2 Either Party may, on or after the date falling 30 days after the date that a written notice was received in accordance with Article 17.1, refer a Dispute for arbitration in accordance with the Arbitration Rules of the International Chamber of Commerce, the decision of which shall be binding on the Parties.

Յուրաքանչյուր Կողմ կարող է 17.1 հոդվածի համաձայն գրավոր ծանուցում ստանալու օրվանից 30-րդ օրը կամ դրանից հետո Վեճն ուղարկել, Միջազգային առևտրային պալատի արբիտրաժային կանոնների համաձայն, արբիտրաժի լուծման, որի որոշումը պարտադիր է Կողմերի համար:

17.3 The seat of arbitration shall be Geneva, Switzerland.

Արբիտրաժի նստավայրն է Ժնևը, Շվեյցարիա:

17.4 The language of the arbitration and all correspondence and documentation related to it is English. The number of arbitrators shall be 1 to be appointed by the Court, as defined in the Arbitration Rules of the International Chamber of Commerce.

Արբիտրաժի լեզուն անգլերենն է, և դրա հետ կապված ամբողջ հաղորդակցությունը և փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն: Արբիտրների թիվը մեկն է, որը նշանակվելու է Դատարանի կողմից, ինչպես սահմանված է Միջազգային առևտրային պալատի արբիտրաժային կանոններով:

18 Severability

In the event that any clause or provision of this Agreement or any part thereof becomes or shall be declared by a court of competent jurisdiction invalid, illegal, void, or unenforceable, this Agreement shall continue in full force and effect without said provisions.

19 The Entire Agreement

This Agreement, including all its appendices, embody the entire agreement and understanding of the Parties with respect to the subject matter hereof and supersede all prior or contemporaneous agreements and understandings of the Parties, verbal or written, relating to the subject matter hereof.

20 Amendments

The provisions of this Agreement may be waived, supplemented or amended only by an instrument in writing signed by the authorized representatives of the Parties.

21 Counterparts

This Agreement may be executed in several counterparts, each of which shall be deemed an original, but all of which together shall constitute one and the same agreement. The Agreement is executed in three original copies. Each Party holds one copy hereof.

Դրույթների մասնատելիություն

Այն դեպքում, երբ սույն Պայմանագրի որևէ կետ կամ դրույթ կամ դրա որևէ մաս իրավասու դատարանի կողմից ճանաչվի անվավեր, անօրինական, կամ ոչ կիրառելի, սույն Պայմանագիրը կշարունակի գործել առանց նշված դրույթների:

Ամբողջական պայմանագիր

Սույն Պայմանագիրը, այդ թվում՝ դրա բոլոր Հավելվածները, ներառում է Կողմերի ամբողջական համաձայնությունն ու փոխըմբռնումը սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ և փոխարինում է սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ Կողմերի նախորդող կամ առկա բոլոր բանավոր կամ գրավոր համաձայնություններն ու ըմբռնումները:

Փոփոխություններ

Սույն Պայմանագրի դրույթներից կարելի է հրաժարվել, դրանք կարող են լրացվել կամ փոփոխվել միայն Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրված գրավոր փաստաթղթի հիման վրա:

Օրինակներ

Սույն Պայմանագիրը կարող է կնքվել է մի քանի օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, բայց բոլորը միասին կազմում են նույն մեկ պայմանագիրը: Պայմանագիրը կնքվում է երեք բնօրինակով: Յուրաքանչյուր Կողմի տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

IN WITNESS WHEREOF, the undersigned have caused this Agreement to be executed as of the date first written above.

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈՔԸՅԱԼԻ, ներքոստորագրյալները սույն Պայմանագրի սկզբնամասում նշված օրը կնքեցին սույն Պայմանագիրը:

FOR CLIENT

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Signature

Ստորագրություն

Name: Sargis Hayotsyan

Անուն՝ Սարգիս Հայոցյան

Title: Chairman

Պաշտոն՝ նախագահ

FOR CONSULTANT
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Signature
Ստորագրություն

Name: Stephan Schütz
Անուն՝ Ստեֆան Շյուց
Title: Managing Director
Պաշտոն՝ գործադիր տնօրեն

FOR BENEFICIARY
ՇԱՀԱՌՈՒԻ ԱՆՈՒՆԻՑ

Signature
Ստորագրություն

Name: Armen Simonyan
Անուն՝ Արմեն Սիմոնյան
Title: Director
Պաշտոն՝ տնօրեն

Appendix No. 1 Scope of Services

Հավելված 1 Ծառայությունների շրջանակը

1. Scope of Work

Phase 0: project preparation and information management

Ahead of the schematic design work on the concept masterplan for the Project, Phase 0 is designated to create the foundation on which the overall project team composed of the Consultant, third-party consultants and the Client/Beneficiary teams will work together.

The Consultant will prepare a fully coordinated and mutually agreed set of consultant duties (i.e. matrix of responsibilities) that excludes overlaps, omissions and minimizes the potential for subsequent causes of dispute. This is particularly important for work with remotely located consultants that share the same discipline or have certain overlapping responsibilities. The Consultant will define an overarching goal for the Design Team* that clarifies the purpose and output of different assignments in the context of the overall implementation strategy. This will be based on the Client's vision as set out in the concept masterplan for the Project and will provide for the key milestones and sequences, to ensure that the Design Team has a single interpretation of the objectives and how to achieve them. The Design Team can then concentrate on precisely what they need to achieve to reduce wasted effort in lower priority areas and make the best use of the time available in the program durations available.

* The “**Design Team**” consists of the complete design, economical, academic and engineering consultants appointed by the Client. The

1. Աշխատանքի շրջանակը

Փուլ 0. նախագծի նախապատրաստում և տեղեկությունների կառավարում

Ծրագրի գլխավոր հայեցակարգի սխեմատիկ նախագծման աշխատանքների մեկնակին նախորդող 0 փուլը նախատեսված է՝ ստեղծելու հիմքեր, որոնց հիման վրա համատեղ աշխատանքներ կիրականացնի ընդհանուր նախագծային թիմը, որը բաղկացած է Խորհրդատուից, երրորդ կողմ խորհրդատուներից և Պատվիրատուի/Շահառուի թիմերից:

Խորհրդատուն կկազմի խորհրդատուների՝ միանգամայն համակարգված և փոխհամաձայնեցված՝ պարտականությունների շրջանակը (այսինքն՝ պարտավորությունների մատրիցա), որով բացատրվում են համընկնումները, բացթողումները և նվազագույնի է հասցվում վեճի հետագա պատճառների առաջացման հնարավորությունը: Սա հատկապես կարևոր է հեռավար գործող այնպիսի խորհրդատուների հետ աշխատանքի համար, որոնց գործունեության ոլորտը նույնն է կամ որոշ պարտավորություններ համընկնում են: Խորհրդատուն կսահմանի Նախագծային թիմի* գերիսնդիքը, որով հստակեցվում է Ծրագրի իրականացման ընդհանուր ռազմավարության շրջանակներում տարբեր առաջադրանքների նպատակը և արդյունքը: Սա պայմանավորված է Պատվիրատուի տեսլականով, որը շարադրվում է Ծրագրի գլխավոր հատակագծի հայեցակարգում՝ սահմանելով առանցքային փուլերը և գործողությունների հերթականությունը՝ Նախագծային թիմի կողմից խնդիրների և դրանց իրագործման եղանակների միօրինակ մեկնաբանությունը ապահովելու համար: Նախագծային թիմը կարող է, այնուհետև, ուշադրությունը կենտրոնացնել իր անելիքների վրա՝ ոչ այնքան առաջնահերթ ոլորտներում ջանքերի վատնումը նվազեցնելու և ծրագրով նախատեսված ժամկետների շրջանակներում առկա ժամանակը լավագույնս օգտագործելու համար:

* «**Նախագծային թիմը**» կազմված է նախագծման, տնտեսական, գիտական և ճարտարագիտական ոլորտի բոլոր խորհրդատուներից, որոնք նշանակվում են

corresponding relations are set out in the diagram in Appendix No. 3 (*Design Team*).

To achieve this, the Consultant will facilitate a program workshop to help identify critical dependencies and ways to mitigate potential delays as they arise. At the 2-day kick-off workshop in Yerevan the Design Team representatives will mutually finalize and agree on the matrix of responsibilities and deadlines to be outlined in the planning schedule.

Ahead of the kick-off workshop with the Design Team in Yerevan, the Consultant will establish lines of communication and decision making from the outset of the project, putting a clear meeting strategy in place, establishing tools to identify information required and design issues on early stages, as well as reporting tools, and will share the first draft of the matrix of responsibilities and planning schedule to all parties involved.

To monitor the progress ahead of the schematic design work, the Consultant will conduct six online meetings, once in two weeks. They will be set up, with a clear agenda, by the Consultant, who will chair and keep the minutes of the online meetings.

Requests for information will be monitored by the whole Design Team so that information required is clearly identified and the team is aware of what has been received. The request for information list (RFI) will identify:

- information required;
- impact if the information is not received;
- an assumption where appropriate;
- date by which the information is required;
- status of the request.

Պատվիրատուի կողմից: Համապատասխան հարաբերությունները ներկայացված են Հավելված 3-ում (*Նախագծային թիմ*) բերված գծապատկերում:

Այս նպատակով Խորհրդատուն կկազմակերպի ծրագրային աշխատարան՝ կարևոր փոխկախյալ գործոնները և հնարավոր ուշացումների դեպքում դրանց ազդեցության նվազեցման ճանապարհները ի հայտ բերելու համար: Երևանում անցկացվելիք երկօրյա մեկնարկային աշխատարանի շրջանակներում Նախագծային թիմի ներկայացուցիչները համատեղ կամփոփեն պարտավորությունների մատրիցայի ու պլանավորման ժամանակացույցի մեջ ընդգրկվող ժամկետները և համաձայնության կգան դրանց շուրջ:

Մինչև Երևանում Նախագծային թիմի հետ մեկնարկային աշխատարան անցկացնելը, Խորհրդատուն ի սկզբանե կսահմանի հաղորդակցության ուղիները և որոշումների կայացման գործընթացը՝ ներդնելով հանդիպումների անցկացման հստակ ռազմավարություն, սահմանելով անհրաժեշտ տեղեկություններն ու նախագծման հետ կապված խնդիրները վաղ փուլում հայտնաբերելու գործիքները, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման գործիքները, այնուհետև ներգրավված բոլոր կողմերին կփոխանցի պարտավորությունների մատրիցայի առաջին նախագիծը և պլանավորման ժամանակացույցը :

Մխեմատիկ նախագծման աշխատանքների ընթացքին հետևելու համար Խորհրդատուն կանցկացնի վեց առցանց հանդիպում երկու շաբաթը մեկ անգամ: Դրանք կկազմակերպվեն հստակ օրակարգով Խորհրդատուի կողմից, որն էլ կվարի առցանց հանդիպումները և կպահպանի դրանց արձանագրությունները: Տեղեկությունների հարցումներին կհետևի ամբողջ Նախագծային թիմը, որպեսզի անհրաժեշտ տեղեկությունը հստակ նույնականացվի, իսկ թիմը իրազեկ լինի ստացված տեղեկությունից: Տեղեկությունների հարցումների ցանկում (ՏՀ) կնշվեն՝

- անհրաժեշտ տեղեկությունները,
- ազդեցությունը՝ տեղեկությունը չստանալու դեպքում,
- ենթադրություն, երբ այն տեղին է,
- տեղեկության ստացման անհրաժեշտ ամսաթիվը,
- հարցման կարգավիճակը:

The RFI list will be shared with the Client team regularly and discussed at progress meetings.

Phase 0 will conclude with the submission of Phase 0 deliverables after the 6th biweekly meeting.

Phase 1: schematic design of masterplan

Once instructed to proceed with the schematic design of the masterplan, the Consultant will move to the next phase and actively work on the masterplan. The development of the schematic design is organized in two work packages referred to as components.

Component 1: schematic design of masterplan: integration and revision

The schematic design of the masterplan will begin with a two-day project kick-off workshop in Yerevan, where the Project Team, the Client, and the other parties involved will review the completed and approved concept design of the masterplan and identify areas which need to be revised or developed in more depth, amongst other topics.

The developing schematic design will be shared regularly, and feedback will be incorporated as the project progresses. The Consultant will be responsible for the coordination and integration of the input received.

To continue the necessary dialogue and exchange, as well as to keep record of the open topics, the Consultant will organize bi-weekly meetings. The Consultant will coordinate the agenda, chair and keep the minutes of the online meetings.

Based on the specialist input which will be received over the duration of the schematic design phase, the Consultant will revise and deepen the conceptual masterplan, as well as update the landscape concept for the masterplan. This revised conceptual masterplan will then be the basis for

ՏՀ ցանկը պարբերաբար կփոխանցվի Պատվիրատուի թիմին և կքննարկվի աշխատանքների առաջընթացի վերաբերյալ անցկացվող հանդիպումների ընթացքում: Օ փուլը կամփոփվի երկու շաբաթը մեկ անցկացվող 6-րդ հանդիպումից հետո Օ փուլի ներկայացվելիք նյութերի տրամադրմամբ:

Փուլ 1. Գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում

Գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծմանը անցում կատարելու ցուցում ստանալուն պես Խորհրդատուն կանցնի հաջորդ փուլ և ակտիվորեն կիրականացնի գլխավոր հատակագծի նախագծման աշխատանքները: Սխեմատիկ նախագծի մշակման գործընթացը կկազմակերպվի աշխատանքների երկու փաթեթով, այսուհետ՝ բաղադրիչներ:

Բաղադրիչ 1. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. ինտեգրում և վերանայում

Գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծումը կմեկնարկի Երևանում նախագծի վերաբերյալ երկօրյա մեկնարկային աշխատարանի անցկացմամբ, որի շրջանակներում Նախագծային թիմը, Պատվիրատուն և ներգրավված մյուս կողմերը, ի թիվս այլնի, կուսումնասիրեն գլխավոր հատակագծի նախագծի ավարտված և հաստատված հայեցակարգը և կառանձնացնեն այն հատվածները, որոնք անհրաժեշտ է վերանայել և ավելի մանրամասն մշակել:

Մշակվող սխեմատիկ նախագիծը պարբերաբար կիրապարակվի և նախագծի առաջընթացին զուգընթաց հաշվի կառնվեն դիտողությունները: Խորհրդատուն պատասխանատու կլինի ստացվող տվյալների համակարգման և ինտեգրման համար:

Անհրաժեշտ երկխոսությունը և կարծիքների փոխանակումը շարունակելու, ինչպես նաև լուծում պահանջող հարցերը արձանագրելու համար Խորհրդատուն երկու շաբաթը մեկ անգամ կկազմակերպի հանդիպումներ: Խորհրդատուն կկազմի օրակարգը, կվարի առցանց հանդիպումները և կպահպանի դրանց արձանագրությունները:

Մասնագետների կողմից տրամադրվող տվյալների հիման վրա, որոնք կստացվեն սխեմատիկ նախագծման ամբողջ փուլի ընթացքում, Խորհրդատուն կվերանայի և ավելի կմանրամասնի գլխավոր հատակագծի հայեցակարգը, ինչպես նաև կթարմացնի գլխավոր հատակագծի լանդշաֆտային հայեցակարգը: Այսպիսով, այս

the local specialists who will be preparing the package to be submitted for the official approval of the masterplan.

Component 1: Optional Service: vertical design

As an optional service, the Consultant will produce a 3D Rhino Modell including the surface of the existing terrain and the adjusted terrain.

In addition, the Consultant will provide max. six dwg sections (location to be decided with the Client at latest two weeks before submission) indicating the different vertical elevations before and after.

Component 2: schematic design of masterplan: design guidelines

Once most of the input has been collected from the third-party specialists, the Consultant will in parallel begin preparing the functional layout (design guidelines) for the territory of the Project at 17th District of Yerevan, Republic of Armenia, as outlined in Appendix No. 2 (*Project Area*) of this Agreement.

This includes the following actions:

- define the building height zoning and specify the control over the max. heights of the main buildings and podiums;
- determine the form of the main street interfaces and set out the street-wall control requirements;
- set out the requirements for building interface and form to control the three dimensions of the buildings, particularly the facade width and building height;
- set out the control requirements for the building style, materials, color, roof, etc.;

վերանայված հայեցակարգային գլխավոր հատակագիծը հիմք կլինի տեղական մասնագետների կողմից գլխավոր հատակագծի պաշտոնապես հաստատման համար անհրաժեշտ փաթեթի պատրաստման համար:

Բաղադրիչ 1. Լրացուցիչ (կամրնտիր) ծառայություն՝ ուղղահայաց պլանավորում

Որպես լրացուցիչ (կամրնտիր) ծառայություն՝ Խորհրդատուն կպատրաստի «3D Rhino» մոդելը՝ ներառելով գոյություն ունեցող տեղանքի և ձևափոխված տեղանքի ռելիեֆները:

Բացի դրանից, Խորհրդատուն կտրամադրի «dwg» ձևաչափով մինչև վեց հատ կտրվածք (կտրվածքի տեղը կորոշվի Պատվիրատուի հետ՝ հանձնումից առնվազն վեց շաբաթ առաջ)՝ նշելով տեղանքի առկա և ձևափոխված իրավիճակների տարբեր ուղղահայաց բարձրությունները:

Բաղադրիչ 2. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. նախագծային ուղեցույց

Երրորդ կողմ մասնագետներից տվյալների մեծ մասը հավաքելուն զուգահեռ Խորհրդատուն կսկսի մշակել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի 17-րդ թաղամասում գտնվող Նախագծի տարածքի ֆունկցիոնալ սխեման (նախագծային ուղեցույց), ինչպես ներկայացված է սույն համաձայնագրի Հավելված 2-ում (*Նախագծի տարածք*):

Վերոնշյալը ներառում է հետևյալ գործողությունները՝

- շենքերի՝ ըստ բարձրությունների գոտիավորման ստեղծում և հիմնական շենքերի ու բարձրահարթակների առավելագույն բարձրության նկատմամբ հսկողության սահմանում,
- փողոցների հիմնական ինտերֆեյսների (ճակատների տեսակների) որոշում և փողոցի նկատմամբ շենքերի ճակատների դիրքի վերաբերյալ հսկողության պահանջների սահմանում,
- շենքերի երեք չափերի, մասնավորապես՝ ճակատի լայնության և շենքի բարձրության հսկողության նպատակով շենքերի ինտերֆեյսին և ձևին ներկայացվող պահանջների սահմանում,
- շենքերի ոճի, նյութերի, գույնի, տանիքների, և այլն, հսկողության պահանջների սահմանում,

- set out the control requirements of the landscape design for the public spaces (including public facilities and their spatial function zoning, etc.);
- determine the landmark buildings on the plot such as the cultural center and stadium and set out the control requirements of the environment around such landmark buildings;
- determine traffic circulation organization requirements within the site, specify the location of the vehicular accesses to the plot and the road sections where the accesses are prohibited (based on traffic engineer advise);
- set out the control requirements of the parking facilities, form and accesses (based on traffic engineer advise);
- set regulatory principles and elements for sign, signage and advertisement design;
- set regulatory principles and elements for night lighting design;
- set regulatory principles and elements for green building design.

- հանրային տարածքների համար (այդ թվում՝ հանրային օբյեկտներ և տարածքում դրանց ֆունկցիոնալ գոտիավորում և այլն) լանդշաֆտային նախագծման հսկողության պահանջների սահմանում,
- տարածքում կարևոր նշանակության շենքերի, ինչպես օրինակ՝ մշակութային կենտրոնի և մարզադաշտի որոշում և այդպիսի նշանավոր շենքերի շրջակա միջավայրի հսկողության պահանջների սահմանում,
- տարածքի ներսում ճանապարհային երթևեկության կազմակերպման պահանջների սահմանում, տարածք ավտոմոբիլային տրանսպորտի մուտքի տեղերի, ինչպես նաև դրանց «մուտքը արգելված է» ճանապարհահատվածների որոշում (տրանսպորտային ինժեների խորհրդի հիման վրա)
- կայանման օբյեկտների, ձևերի և մուտքերի հսկողության պահանջների սահմանում (տրանսպորտային ինժեների խորհրդի հիման վրա))
- նշանների, ցուցանակների և գովազդի նախագծումը կարգավորող սկզբունքների և տարրերի սահմանում,
- գիշերային լուսավորության նախագծումը կարգավորող սկզբունքների և տարրերի սահմանում
- կանաչ շենքերի նախագծումը կարգավորող սկզբունքների և տարրերի սահմանում

2. Deliverables

Within the scope of work, the Consultant will produce a number of deliverables. These are outlined as follows:

Phase 0: project preparation and information management

- Matrix of responsibilities
- Overall planning timeline (phase 0 – schematic design)
- collected meeting agenda and meeting minutes of bi-weekly meetings
- request for information list

2. Ներկայացվող նյութերը

Աշխատանքի շրջանակում Խորհրդատուն կպատրաստի մի շարք նյութեր: Դրանք հետևյալ են՝

Փուլ 0. նախագծի նախապատրաստում և տեղեկությունների կառավարում

- Պարտավորությունների մատրիցա
- Պլանավորման ընդհանուր ժամանակացույց (փուլ 0. սխեմատիկ նախագծում)
- հանդիպումների օրակարգի և երկու շաբաթը մեկ անցկացվող հանդիպումների արձանագրությունների փաթեթ

- 1x workshop attendance in Yerevan with 2 people

- տեղեկությունների հարցման ցանկ
- 1 աշխատարանի անցկացում Երևանում՝ 2 անձանց մասնակցությամբ

Phase 1 – Component 1: schematic design of masterplan: integration and revision

Փուլ 1՝ Բաղադրիչ 1. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. ինտեգրում և վերանայում

Intermediate Presentation:

Միջանկյալ սահիկաշար.

- Presentation showcasing the integration of initial input by third-party consultants, research on alternative solutions (to be reflected in studies summoned in the process), updated colorful masterplan and 1x bird eye rendering.
- 3x workshop attendance in Yerevan

- Սահիկաշար, որտեղ ներկայացվում են երրորդ կողմ խորհրդատուների կողմից սրամադրված նախնական տվյալների ինտեգրումը, այլընտրանքային լուծումների հետազոտությունը (որոնք կարտացոլվեն ընթացքում իրականացվող ուսումնասիրություններում), թարմացված գունավոր գլխավոր հատակագիծը և 1 ռենդեր՝ թռչնի թռիչքի բարձրությունից:
- 3 աշխատարանի անցկացում Երևանում:

Completion of Component 1:

1-ին բաղադրիչի ավարտը՝

- Printed A3 size report summarizing the stage
- Schematic Zoning Plan 1:10,000
- Area calculations
- Area Diagrams
- Site Masterplan 1:10,000
- Building volume concept 1:5,000
- Schematic Massing Diagrams
- Colorful masterplan
- Landscape overall concept diagrams
- Landscape node design (5 max. key urban nodes to be defined)
- Visualization (6 exterior renders)
- Visualization of the masterplan at different phases (bird view renderings)

- «A3» ձևաչափով տպագրված հաշվետվություն, որում ամփոփվում են փուլի արդյունքները
- Գոտիավորման սխեմատիկ հատակագիծ՝ 1:10,000 մասշտաբի
- Մակերեսների հաշվարկ
- Տարածական զծապատկերներ
- Տարածքի գլխավոր հատակագիծ՝ 1:10,000 մասշտաբի
- Շենքերի ծավալների հայեցակարգ՝ 1:5,000 մասշտաբի
- Ծավալատարածական սխեմատիկ զծապատկերներ
- Գունավոր գլխավոր հատակագիծ
- Լանդշաֆտային ընդհանուր հայեցակարգի զծապատկերներ
- Լանդշաֆտային հանգույցների նախագծում (առավելագույնը 5 կարևոր քաղաքաշինական հանգույցների սահմանում)
- Վիզուալիզացիա (արտաքին տեսքի 6 ռենդեր)
- Գլխավոր հատակագծի վիզուալիզացիա՝ նախագծի իրականացման տարբեր փուլերում

- Collected Meeting Agenda and Meeting Minutes of bi-weekly meetings
- Workshop attendance in Yerevan

- Հանդիպումների օրակարգի և երկու շաբաթը մեկ անցկացվող հանդիպումների արձանագրությունների փաթեթ
- Աշխատարանի մասնակցություն Երևանում

The deliverables shall be submitted in the following format:

- Hardcopy (A3 – 4 copies): Final Schematic Design Report
- Digital (PDF Format): Drawings (Plans, Sections, Details), Diagrams, Visualizations, presentation files, Meeting Memos

Ներկայացվող նյութերը կներկայացվեն հետևյալ ձևաչափով:

- Թղթային տարբերակ (A3՝ 4 օրինակ). Մխեմատիկ նախագծման վերջնական հաշվետվություն
- Էլեկտրոնային տարբերակ (PDF ձևաչափով)՝ գծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, դետալներ), գծապատկերներ, վիզուալ պատկերներ, սահիկաշարեր, հանդիպումների վերաբերյալ ծանուցումներ

Phase 1 – Component 2: schematic design of masterplan: design guidelines

Completion of Component 2:

- Printed A3 size report summarizing the stage
- Site Masterplan 1:10,000
- Urban Design Guidelines for Phase 1: 1x A3 per plot, summarizing content of each plot, incl. a plan and pictogram 1:1,000
- 1x Workshop attendance in Yerevan

The deliverables shall be submitted in the following format:

- Hardcopy (A3 – 4 copies): Design Guideline Book
- Digital (PDF Format): A3 Guideline Pages, Guideline book

All deliverables will be produced in English.

3. Duration

The project is divided into two stages, with Phase 0 expected to kick-off after signing the Agreement.

Փուլ 1՝ Բաղադրիչ 2. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. նախագծային ուղեցույց

2-րդ բաղադրիչի ավարտ.

- «A3» ձևաչափով տպագիր հաշվետվություն, որում ամփոփվում են փուլի արդյունքները
- Տարածքի գլխավոր հատակագիծ՝ 1:10,000 մասշտաբի
- Քաղաքաշինական նախագծման ուղեցույց 1-ին փուլի համար՝ 1 հատ «A3» ձևաչափի՝ յուրաքանչյուր տեղամասի համար՝ հակիրճ նկարագրելով յուրաքանչյուր տեղամասի բովանդակությունը՝ ներառյալ հատակագիծը և գրաֆիկական պատկերը՝ 1:1,000 մասշտաբի
- 1 աշխատարանի մասնակցություն Երևանում

Ներկայացվող նյութերը կներկայացվեն հետևյալ ձևաչափով

- Թղթային տարբերակ (A3՝ 4 օրինակ). նախագծային գիրք-ուղեցույց
- Էլեկտրոնային տարբերակ («PDF» ձևաչափով)՝ ուղեցույցի էջեր՝ «A3» ձևաչափի, գիրք-ուղեցույց

Ներկայացվող բոլոր նյութերը կկազմվեն անգլերենով:

3. Տևողությունը

Նախագիծը բաժանված է երկու փուլի. 0 փուլը կսկսվի Պայմանագրի ստորագրումից հետո: Արդեն իսկ հավաքված

On the matured design basis, the work on Phase 1 will commence.

նախագծային նյութերի հիման վրա կմեկնարկեն 1-ին փուլի աշխատանքները:

Phase 0: project preparation and information management

- Overall time up to 4 months
- 2 weeks preparation ahead of the on-site kick-off meeting
- 1x project kick-off workshop (2 days) in Yerevan, Armenia
- bi-weekly online planning meetings with all parties involved, organized, documented and coordinated by the Consultant
- total number of bi-weekly meetings is limited to 6

Փուլ 0. նախագծի նախապատրաստում և տեղեկությունների կառավարում

- Ընդհանուր ժամանակը՝ մինչև 4 ամիս տևողությամբ
- 2 շաբաթ նախագծի նախապատրաստում՝ Երևանում մեկնարկային հանդիպմանը ընդառաջ
- նախագծի մեկնարկային աշխատարանի անցկացում (2 օր) Հայաստանում՝ Երևանում
- երկու շաբաթը մեկ անգամ պլանավորման առցանց հանդիպումների անցկացում բոլոր կողմերի ներգրավվածությամբ, որը կազմակերպվում, արձանագրվում և համակարգվում է Խորհրդատուի կողմից
- երկու շաբաթը մեկ անցկացվող հանդիպումների ընդհանուր թիվը 6-ն է

Phase 1 – Component 1: schematic design of masterplan: integration and revision

- 5 months design work by the Consultant in coordination with the Project Team (estimated. Feb. 25- end June.25) including the following meetings:
 - 1x kick-off workshop with key stakeholders in Yerevan, Armenia
 - 1x interim design workshop with key stakeholders in Yerevan, Armenia
 - bi-weekly online planning meetings with all parties involved
 - total number of bi-weekly meetings is limited to 9
 - 1x end-of-stage presentation in Yerevan, Armenia

Փուլ 1՝ Բաղադրիչ 1. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. ինտեգրում և վերանայում

- 5 ամիս տևողությամբ նախագծման աշխատանքներ Խորհրդատուի կողմից՝ Նախագծային թիմի հետ համաձայնեցմամբ (մոտավորապես փետրվարի 25-ից մինչև հունիսի 25-ը՝ ներառյալ), այդ թվում՝ հետևյալ հանդիպումները
 - Հայաստանում՝ Երևանում մեկնարկային աշխատարանի անցկացում հիմնական շահառուների հետ
 - Հայաստանում՝ Երևանում 1 միջանկյալ նախագծային աշխատարանի անցկացում հիմնական շահառուների հետ
 - երկու շաբաթը մեկ անգամ պլանավորման հարցերով առցանց հանդիպումների անցկացում բոլոր կողմերի ներգրավվածությամբ
 - երկու շաբաթը մեկ անգամ անցկացվող հանդիպումների ընդհանուր թիվը կազմում է 9-ը
 - 1 ամփոփիչ սահիկաշարի ներկայացում Հայաստանում՝ Երևանում

Phase 1 – Component 2: schematic design of masterplan: design guidelines

- 2 months design work by the Consultant in coordination with the Project Team, including the following presentation:
- 1x end-of-stage presentation in Yerevan, Armenia

Փուլ 1՝ Բաղադրիչ 2. գլխավոր հատակագծի սխեմատիկ նախագծում. նախագծային ուղեցույց


- 2 ամիս տևողությամբ նախագծման աշխատանքներ Խորհրդատուի կողմից՝ Նախագծային թիմի հետ համաձայնեցմամբ, այդ թվում՝ հետևյալ սահիկաշարը՝
- 1 ամիսովիչ սահիկաշարի ներկայացում Հայաստանում՝ Երևանում

Appendix No. 2 Project Area

Հավելված 2 Նախագծի տարածք

The Academic City will be located on the outskirts of Yerevan – in the territory of the 17th District site including the Hayfilm Area.

Ակադեմիական քաղաքը տեղակայված կլինի Երևանի մերձակայքում՝ 17-րդ թաղամասի, այդ թվում՝ Հայֆիլմի տարածքում:




[Location of the Project areas outside of Yerevan, Armenia]

[Նախագծի տեղանքները Երևանի մերձակայքում, Հայաստան]

Phase 1 – Component 2 / Փուլ 1՝ Բաղադրիչ 2

Phase 1 – Component 2 refers to the part of the masterplan to be implemented in the early stage of the project development.

Փուլ 1՝ Բաղադրիչ 2-ը վերաբերում է գլխավոր հատակագծի այն մասին, որը պետք է իրականացվի կառուցապատման վաղ փուլում:



Appendix No. 3 Design Team

Հավելված 3

The Design Team consists of the complete design, economical, academic and engineering consultants appointed by the Client. The corresponding relations are shown in the diagram provided by the Client (see below).

To develop a holistic masterplan, the Client is directly engaging with third party specialists from various disciplines, which include, but may not be limited to the following:

- Masterplan Project Approval (Local Planner – to be determined)
- Utilities and Infrastructures (Local Planner – to be determined)
- Socio Economics (RSUP)
- Traffic (Systematica)
- Universities' Restructuring (TUM)
- Landscape (Botanical Garden)
- Train/Rail Planning (South Caucasus Railway)
- Traffic Planning external roads (MTAI)
- Power Line Relocation (Local Planner – to be determined)
- External Utilities Infrastructure (Local Planner – to be determined)

Նախագծային թիմը կազմված է Պատվիրատուի կողմից նշանակված՝ նախագծման, տնտեսական, գիտական և ինժեներական ոլորտի բոլոր խորհրդատուներից: Համապատասխան հարաբերությունները արտացոլված են Պատվիրատուի կողմից ներկայացված գծապատկերում (տե՛ս ստորև):

Ամբողջական գլխավոր հատակագիծ կազմելու համար Պատվիրատուն ուղղակիորեն ներգրավել է երրորդ կողմ մասնագետների՝ տարբեր բնագավառներից, մասնավորապես՝

- Գլխավոր հատակագծի հաստատման համար փաթեթ (Տեղական նախագծող՝ որոշվելու է հետագայում)
- Կոմունալ ծառայություններ և ենթակառուցվածքներ (Տեղական նախագծող՝ որոշվելու է հետագայում)
- Սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն («RSUP» ընկերություն)
- Երթևեկություն («Միստեմատիկա» ընկերություն)
- Համալսարանների վերակազմավորում (ՄՏՀ)
- Լանդշաֆտ (Բուսաբանական այգի)
- Երկաթուղու/երկաթգծի նախագիծ (Հարավկովկասյան երկաթուղի)
- Երթևեկության պլանավորում՝ Ծրագրի իրականացման տարածքից դուրս ճանապարհներ (ՏԿԵՆ)
- Հոսանքագծերի տեղափոխում (Տեղական նախագծող՝ որոշվելու է հետագայում)
- Ծրագրի իրականացման տարածքից դուրս կոմունալ ենթակառուցվածքներ (Տեղական նախագծող՝ որոշվելու է հետագայում)

